ԼԵՎՈՆ VI-Ի ՆՈՎԵԼՆԵՐԸ

Պրոֆ. ՍՊԻՐՈՍ Ն. ՏՐՈՅԱՆՈՍ (Աթենք)

Օրենսդրական գործունեության չափերով, արևելահռոմեական կայսրերի շարքում Լևոն VI[1] *Իմաստունը*[2] *Հուստինիանոսից հետո գրավում է երկրորդ տեղը։ Բարի օրենսդիր գործունեությունից, մեզ է հասել նաև նրա դատաստանական երկը՝ բաղկացած 113 նովել պարունակող մի ժողովածուից։ Այն պահպանվել է հինգ ձեռագրով, որոնցից հնագույնը՝* Marcianus graecus *179 (XIII դարի սկիզբ) ինչ-որ իմաստով մի եղակի մատյան է, քանի որ մյուս 4-ը, այսինքն՝* Leidensis B. P. G. 33-C, Montepessulanus H-73, Vaticanus Palatinus graecus 387 *և* Berolinensis graecus 95 (Phil. 1499) *ձեռագրերը մեզ հասել են XVI դարի առաջին կեսի ընդօրինակությամբ*[3]*։ Վերևում հիշատակված ընդօրինակություններից երրորդը (Վատիկանյան ձեռագիրը) իր ստեղծումից քիչ անց, 1558 թ. Շոտեն Հենրի Շրիմգերը դրեց*

---

1 *Վերջին հարյուրամյակում Լևոնի նովելներին վերաբերող գրականության մեջ կարևորներն են.* G. Marikades. Τὸ ἀστικὸν δίκαιον ἐν ταῖς νεαραῖς τῶν βυζαντινῶν αὐτοκρατόρων. Athen, 1922. H. Monier. Les Novelles de Leon le Sage.—[Bibliothèque des Universités du Midi, fasc. XVII] Bordeaux—Paris, 1923; C. A. Spulber. Les Novelles de Léon le Sage [Études de droit byzantin, 3]. Cernauti, 1934; P. Noailles-A. Dain. Les Novelles de Léon VI le Sage. Paris, 1944: L. Wenger. Die Quellen des römischen Rechts [Österreichische Akademie der Wissenschaften. Denkschriften der Gesamtakademie, 2]. Wien, 1953, S. 705—707; G. Michaélidès—Nouaros. Les idées philosophiques de Leon le Sage sur les limites du pouvoire législatif et son attitude envers les coutumes.—In: Ἐπιστημονικὴ Ἐπετηρὶς Σχολῆς Νομικῶν καὶ Οἰκονομικῶν Ἐπιστημῶν Ἀριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης 8 (1960—1963) (=Μνημόσυνον Π. Βιζουκίδου] 25—54=*Նույնի՝* Αἱ Φιλοσοφικαὶ καὶ κοινωνιολογικαὶ ἰδέαι Λέοντος ΣΤ' τοῦ Σοφοῦ ἐπὶ τῶν ὁρίων τῆς νομοθετικῆς ἐξουσίας. *տե՛ս Նույնի՝.* Δίκαιον καὶ κοινωνικὴ συνείδησις, then, 1972, S. 99—129; Em. Condurachi. Tradition et innovation dans la pensée juridique de Leon le Sage, *տե՛ս* Revue Roum. d'Histo're 13 (1974) 335—340; P. E. Pieler. Byzantinische Rechtsliteratur.—In: H. Hunger. Die hochsprachliche profane Literatur der Byzantiner, Bd. II [Handbuch der Altertumswissenschaft. XII, 5. 2]. München, 1978, S. 358, 449—451; N. van der Wal—J. H. A. Lokin. Historiae iuris graecoromani delineatio. Les sources du droit byzantin de 300 à 1453, Groningen, 1985, S. 86; Sp. Troianos. Οἱ πηγὲς τοῦ βυζαντινοῦ δικαίου, Athen—Komotene, 1986, S. 95—98; Marie Theres Fögen. Legislation und Kodifikation des Kaisers Leon VI, *տե՛ս* Subseciva Groningana 3 (1989) (=Proceeding of the Symposium on the Occasion of the Completion of a New Edition of the Basilica, Groningen, 1—4 June, 1988) 23—35.

2 Սոֆոս *ինչպես նաև* φιλόσοφος *մականունների մասին տե՛ս* Spulber. *նույն տեղում, էջ 48 և հտ.։*

3 *Հմմտ. ձեռագրերի նկարագրությունները.* Spulber. *նույն տեղում, էջ 3—17 և* Noailles-Dain. *նույն տեղում, էջ* XXII—XXXII.

երկի առաջին հրատարակության հիմքում[4]։ Դրանից հետո 113 նովելների ժողովածուն բազմիցս[5] հրապարակվել է, որոնցից վերջինը Պ. Նոայլեսի և Ա. Դենի[6] դրեթե կես դար առաջ ձեռնարկած հրատարակությունն է։ Հենրի Ագիլին արդեն XVI դարում նովելների հունարեն բնագիրը թարգմանել է լատիներեն, իսկ մեր դարի 30-ական թթ., երկի վերջին հրատարակությունից մեկ տարի անց, Կ. Ա. Շպուլբերը այն փոխադրել է ֆրանսերենի։

113 նովելների ժողովածուի հետ կապված են մի շարք չլուծված խնդիրներ։ Բուն նովելների բնագրի սկզբում դրված է մուտք (Prooimion), որը սակայն այն «գրկում է վավերագրին բնորոշ հատկանիշից»[7], մատնանշելով ժողովածուի ոչ պաշտոնական, առնվազն կիսապաշտոնական ծագումը։ Խոսվել է նաև ժողովածուի մի շարք հատկանիշների մասին, որոնք մասնավոր բնույթ[8] են տալիս նովելներին, քանի որ բացակայում է դրանց թղթավերջը (Subskriptionen) և թղթաուղղը (Publikationsvorschriften), երբեմն նաև մի շարք նովելների տիտղոսաշարը (Inscriptionen)։ Նովելներն իրենց մանրամասնություններով իսկապես տարբերվում են[9], այդ կարող ենք հաստատել առաջին 68 նովելների սխեմատիկ կառուցվածքի ուսումնասիրությամբ, շրջանցելով դրանում արած աշխատանքի որոշ հետքեր[10]։

Բոլոր այս նկատառումներն այնուհանդերձ վերաբերում են միայն ժողովածուի վերջնական կառուցվածքին, որն ինչպես ասվեց, հայտնի է սոսկ մի սահմանափակ ձեռագրական ավանդությամբ։ Այնուամենայնիվ ժողովածուն նախնական, կարելի է ասել բավական իսկական կառուցվածք է ունեցել, որը թույլ չի տվել այլևս միջամտել։ Կարող ենք ամբողջովին բացառել, որ բացակայող տիտղոսաշարերը և թղթավերջերը անփույթ գրիչների կողմից են բաց թողնվել, ինչպես նաև այն, որ ժողովածուի հետագա մշակողները լրացումներ են կատարել առանց հետևելու աշխատանքային վաղ փուլում կիրառված սկզբունքներին։ Այս տեսանկյունից, ըստ իս, տնկասկած հնարավոր է, որ կայսրերից մեկը անձամբ նախաձեռներ սեփական օրենքների հավաքումը, ժամանակի ընթացքում փոռածելով այն մասնավոր

---

[4] Αὐτοκρατόρων Ἰουστινιανοῦ, Ἰουστίνου, Λέοντος νεαραὶ διατάξεις. Ἰουστινιανοῦ ἐδικτα.— Impp Iustiniani, Iustini, Leonis novellae constitutiones. Iustinian edicta. Ex bibliotheca illustris viri Huldrici Fuggeri, domini in Kirchberg et Weyssenhorn, publicae comoditati dicantur. Iustiniani quidem opus antea editum, sed nunc primum ex vetustis exemplaribus studio et diligentia Henrici Scrimgeri Scoti restitutum atque emendatum, et viginititribus Costitutionibus (sic), quae desiderabantur, auctum. Cui et Edicta eiusdem Imperatoris, non prius edita, tamquam corollarium, accesserunt. Iustini autem et Leonis Constitutiones (quae et ipsae in antiquis codicibus novellae cognominatur) nunquam antea Lucem prolatae. Anno MDLVIII. Excudebat Henricus Stephanus Huldrici Fuggeri tipographus. Հմմտ. Spulber. Նույն տեղում, էջ 19 և հտ. և Noailles-Dain. Նույն տեղում, էջ LI և հտ.։

[5] Հնագույն հրատարակությունների մասին տե՛ս Spulber. Նույն տեղում, էջ 21 և հտ. և Noailles-Dain. Նույն տեղում, էջ LIII և հտ.։

[6] Noailles-Dain. Նույն տեղում։

[7] Fr. Dölger. Regesten der Kaiserurkunden des oströmischen Reiches von 565—1453. I. Teil: Regesten 565—1025. München und Berlin, 1924 (Hildesheim 1976), № 524.

[8] Wenger. Նույն տեղում, էջ 706։

[9] Հմմտ. Monnier. Նույն տեղում, էջ 5։ „Les commissaires chargés de former le recueil furent, sans aucun doute, autorisés à pratiquer des suppressions dans le texte original, par quoi s'explique la surprenante brièveté de quelques novelles comparée à la prolixité de beaucoup d'autres".

[10] Հմմտ. Monnier. Նույն տեղում, էջ 6։ „Cela prouve un travail fait avec hâte, et sans doute cette hâte fut imposée".

ժողովածուի, ընդ որում բաց թողնելով դրանց պաշտոնական ծագման մի շարք հատկանիշեր։

Բացի այդ, մեզ հասած ժողովածուում հայտնվում են առանձին խորագրված նովելներ, որոնք անկասկած բնագրային չեն[11]։ Սակայն սա չենք կարող բերել իբրև ժողովածուի ոչ պաշտոնական բնույթը հաստատող փաստարկ, քանի որ դրանք սկզբում ամենայն հավանականությամբ գտնվել են տարբեր նովելների բնագրերի լուսանցքներում և գրիչների կողմից են բնագրի մեջ մուծվել[12]։

Արդեն հիշատակված Պ. Նոայլեսը և Ս. Դենը, որոնք վերջին անգամ հրատարակել են ժողովածուն, պաշտպանում են այն դրույթը, որ այստեղ ընդգրկված նովելները առանձին չեն եղել, այլ բոլորը միասին ամբողջական ժողովածու են կազմել[13]։ Այս վարկածը հիմնված է այն փաստերի վրա, որոնք գտնում ենք նովելների բնագրերի վկայակոչումներում կամ առնվազն «նախորդ» կարգավորումների ակնարկներում (հատկապես 5—7, 61—64, 81, 87, և 106[14] նովելներ), որոնք կարելի է բացատրել միայն բոլոր նովելների միաժամանակյա հրապարակումով։ Բացի դրանից երկու հեղինակներն էլ ենթադրում են, որ նովելների բնագրային ողջ ձևավորումը խոսում է ինչպես քերականական, այնպես էլ բառագանձային անընդհատ խմբագրության մասին[15]։

Այս տեսակետը կասկածի տակ է առնվել մի քանի տարի առաջ, Ն.վան գեր Վալսին նվիրված ժողովածուում։ Դրա համար հիմք է ծառայել հենց X դարում ընդօրինակված Ամբրոսյան F 106 sup. կրկնագիրը, ուր պահպանվել են լևոնյան տասներկու նովելներից հատվածներ[16], որոնք ունեն 113 նովելների ժողովածուի թվահամարներից տարբեր համարակարգում[17]։ Այդ իսկ պատճառով անցնենք խնդիրներին, որ այլ կերպ են ավանդված 113 նովել-

---

[11] Monnier. Նույն տեղում, էջ 6, հմմտ. նաև Spulber. Նույն տեղում, էջ 59 և հտ.։

[12] Դա թույլ է տալիս նաև բացատրել, որ շատ նովելներ խորագրեր չեն ունեցել, և որ բնագրին վերաբերող որոշ խորագրեր ճշգրիտ չեն։ Օրինակ 26-րդ նովելի վերնագրում կարդում ենք. „περὶ τοῦ οἰκοποιεῖσθαι εὐνοῦχους καὶ γυναῖκας", սակայն բնագիրը միայն ներքինիների մասին է և ոչինչ չի ասում կանանց մասին։ Ակներևաբար մի օգտագործող կիրառել է այդ խորագիրը 26-րդ և 27-րդ նովելների համար։

[13] Noailles-Dain. էջ VIII—XIII, հմմտ. նաև նույնը Spulber. Նույն տեղում, էջ 62, հին հեղինակների հղումներով։

[14] Հմմտ. օրինակ ԺԱ նովելի առաջին նախադասությունը. „Ὅπερ ἐπὶ τοῦ κλέψαντος οἰκέτου τὸ τῆς ἱερωσύνης σεμνὸν ἀξίωμα, τοῦτο καὶ ἐπὶ τῶν εἰς ἀρχιερατικὴν ὀξάντων ἀναβεβηκέναι τιμὴν οἰκέτων παρὰ τὴν γνώμην τοῦ οἰκείου δεσπότου ὁρίζομεν [...]": Այսպես բերված օրենքը գրեթե բառացի մեջբերում է 9-րդ նովելը, ուր խոսվում է այն ստրուկի մասին, որը քահանա է օծվել առանց տիրոջ գիտության։

[15] Noailles-Dain. Նույն տեղում, էջ IX: „L'oeuvre porte en effet, du commencement a la fin, des traces matérielles de rédaction continue".

[16] N. van der Wal. La tradition des Novelles de Léon le Sage dans le manuscrit palimpseste Ambrosianus F 106 sup., տե՛ս Tijdschr. v. Rechtsgeschich. 43 (1975), էջ 257—269։ Սակայն մինչ այդ արդեն K. Triantaphyllopulos. Ἀνέκδοτον ἔγγραφον περὶ δουλείας καὶ νομοθετικὴ Λέοντος τοῦ Σοφοῦ, տե՛ս Πρακτικὰ τῆς Ἀκαδημίας Ἀθηνῶν 29 (1954), էջ 113—116) աշխատության մեջ, Արեթասի տեղեկության հիման վրա վիճարկված էր Նոայլեսի և Դենի վարկածը։

[17] Միլանյան ընդօրինակությունը, սակայն, նովելների տարբեր համարակալման որևէ վկայություն չունի. հմմտ. Spulber. Նույն տեղում, էջ 58 և հտ.։ Նմանօրինակ մի ապացույց էլ տալիս է XII դարի անանուն իրավաբաններից մեկը Նոմոկանոնի մեկնության մեջ, ուր 100 և 101-րդ նովելները վկայակոչված են որպես 103 (ργ) և 104 (ρδ). հմմտ. V. Tiftixoglu—Sp. Troianos. Unbekannte Basilikentestimonia und Kaiserurkunden aus

ների ժողովածուում, բովանդակության դրեթե միանման դասավորության պայմաններում, սակայն տարբերակվող ձևակերպումներով (ինչպես 16 և 75, 74 և 109 նովելները), հանդամանք, որն անհասկանալի կլիներ նովելների միաժամանակյա հրապարակման դեպքում (տե՛ս ներքևում)։

Ըստ իս հավանական է, որ Լևոնն իր նովելները հրապարակել է, անշուշտ, կարճ ժամանակի ընթացքում, առանձին-առանձին, նպատակ հետապնդելով ընդարձակել կամ ձևափոխել հուստինիանոսյան օրենսդրության դեռևս գործող որոշումները կամ գուցե ոչ վաղ անցյալում ընդունված նոր կարգավորումները։ Միաժամանակ չի կարելի բացառել, որ այս բոլոր օրենքները դեռևս Լևոնի կենդանության օրոք (վերջինիս նախաձեռնությամբ) կամ նրա մահից քիչ առաջ հավաքված են եղել մի կապակցված ընդգրում, ուր ցուցադրաբար ընդգծված է եղել նրա ինքնությունը։ Այդ մասին է խոսում սրբեն հիշատակված մուտքերի գոյությունը ողջ ժողովածուում և իհարկե դրանց վերաբերող վերնագրի ճշգրիտ բովանդակությունը. Λέοντος ἐν Χριστῷ ἀθανάτων βασιλεῖ εὐσεβοῦς βασιλέως Ῥωμαίων αἱ τῶν νόμων ἐπανορθωτικαὶ ἀνακαθάρσεις[18]։

Այս «Օրենսդրքում» դժվար է նկատի առնել որևէ համակարգված չափանիշ։ Համակարգված կառուցվածքի բացակայությունը բխում է գուցե նրանից, որ ժողովածուում բաղմաթիվ միանման թեմաներով նովելներ տարբեր տեղերում են տեղադրվել (հմմտ. օրինակ 37, 38, 69 և 82-րդ նովելները կտակի հաստատման մասին)։ Դա նկատվում է անշուշտ միայն այն դեպքում, երբ երկն ուսումնասիրվում է ամբողջության մեջ։ Հիշատակված Մոնիեն[19], առաջին 68 նովելները բաժանել է հետևյալ բովանդակային իմբերի. որտ նրա 1—17-րդ նովելները վերաբերում են եկեղեցական, 18—25-րդը՝ ամուսնական, 36—44-րդը՝ ժառանգական, 58—68-րդը՝ քրեական իրավունքին։ Առարկայական այս բովանդակությունը թույլ է տալիս մտածել ժողովածուի հնարավոր հաջորդական կառուցվածքի մասին. հատկապես նախնական «ժողովածուի միջուկից» մինչև 113 նովելների այսօր հայտնի ժողովածուն։

Ինչ վերաբերում է դարաշրջանին, որի ընթացքում հրապարակվել են նովելները, ապա դրանք իրենց բովանդակությամբ սերտորեն կապված են Լևոնի կողմից իր հոր օրենսդրական աշխատանքի վերանայման փաստի հետ։ Բարսեղ I-ի 40 գրքից բաղկացած օրենսդրությունից հետո, դրանց բովանդակությունն ու կառուցվածքը վերամշակման ենթարկվեց, այն Լևոն VI-ի օրոք հրապարակվեց որպես մի նոր՝ 60 գրքից[20] բաղկացած ժողովածու, որն ավելի ուշ ստացավ «Բասիլիկներ» անունը[21]։ Ինչպես հայտնի է, Բասիլիկները

---

dem Sinaiticus 1117, տե՛ս Fontes Minores IX [Forschungen zur byzant. Rechtsgeschichte, 18]. Frankfurt a. M., 1993: Ինչ վերաբերում է 101 կամ 104-րդ նովելներին, թվահամարների տարբերությունը իհարկե հեշտությամբ կարելի է բացատրել հնագրությամբ՝ իբրև ընդօրինակողի սիալ (ρα'- ρδ') սակայն այդպես հնարավոր չէ բացատրել 100-ից 103 անցումը, որովհետև հունարեն երկու թվականները՝ ρ' և ργ', մեկը մյուսից հիմնովին տարբերվում են։

18 Ἀνακάθαρσις-ի նշանակության մասին տե՛ս P. E. Pieler. Ἀνακάθαρσις τῶν παλαιῶν νόμων und makedonische Renaissance, տե՛ս Subseciva Groningana 3 (1989, հմմտ. վերևում, ծան. 1), էջ 61—77։

19 Monnier. Նույն տեղում, էջ 6։

20 Հմմտ. A. Schminck. „Fröhnigkeit ziere das Werk". Zur Datierung der 60 Bücher Leons VI. տե՛ս Subseciva Groningana 3 (1989; հմմտ. ծան. 1), էջ 79—114 (մասնավորապես էջ 86 և հտ.)։

21 Հմմտ. A. Schminck. Studien zu mittelbyzantinischen Rechtsbüchern [Forschungen zur byzant. Rechtsgeschichte, 13], Frankfurt a. M., 1986, էջ 27 և հտ.։

իրենց ընկալումներում հաճախ ընդմիջարկվում են Հուստինիանոսյան օրենսգրությամբ։ Այս բնագրային միջամտություններից շատերը նպատակ էին հետապնդում ավելի ներդաշնակ դարձնել Corpus iuris-ի որոշումները, համապատասխանեցնելով դրանք լևոնյան նովելներին[22]։

Այս պարագան թույլ է տալիս ենթադրել, որ բոլոր նովելները կամ առնվազն այն նովելները, որոնք ազդել են մեզ ավանդված Բասիլիկների բնագրի կառուցվածքի վրա (ներառյալ Լևոնի եկեղեցաիրավական նովելները, հմմտ.ներքևում), ստեղծվել են 60 գրքերի օրենսդրության պատրաստումից առաջ[23]։ Քանի որ այժմ այս երկը իր իսկ վերջաբանի վկայությամբ, ինչպես նաև ներքին հատկանիշներով թվագրվում է 888 թ. օգոստոս—889 թ. օգոստոս ժամանակամիջոցով[24], հնարավոր ենք համարում, որ մեզ հետաքրքրող նովելները, իրենց գերակշռող մեծամասնությամբ, հրապարակված լինեն նշված ժամանակից առաջ։

Լևոնյան τῶν νόμων ἐπανορθωτικαὶ ἀνακαθάρσεις-ի վաղ թվագրումը հետևում է «անկասկած նաև նովելների թղթառաջքներից, ուր միայն երկու անձ են հիշատակվում։ Դրանցից մեկը պատրիարք Ստեփանոսն է, Լևոնի փոքր եղբայրը, որը պաշտոնավարել է հավանաբար 886 թ. դեկտեմբերից մինչև 893 թ. մայիսը, իսկ մյուսը Ստիլիանոս Ցոտցեսն է, Լևոնի (...) «վարչապետը», որը կառավարում էր 886 թ. ամենաուշը մինչև 899 թ.»[25]։ Նովելների թվագրման ժամանակ անկարելի է անուշադրության մատնել կայսեր անձնական վարքագիծը (նա 884 թ. երկրորդ անգամ ամուսնացավ վերևում հիշատակված Ցոտցեսի դուստր Զոյեի հետ, իսկ 899 թ.՝ երրորդ անգամ, Եվդոկիայի հետ) և ամուսնական օրենսդրության միջև առկա ակնհայտ հակասությունը՝ հատկապես 90 և 91-րդ նովելներում (այստեղ խստիվ դատապարտվում է երրորդ ամուսնությունը, ինչպես նաև կոնկուբինատը)[26]։

Վերևում շարադրվածից չի կարելի բխեցնել Լևոն VI-ի օրենսդրական երկի համամասն ժամանակագրական կախումը նովելներից, օրենսդրական բանաձևերի վերջնական ձևակերպումով, ինչպես այն մեզ է ավանդվել այսօրվա 113 նովելների ժողովածուում։ Իմ կարծիքով հնարավոր է, որ այն կարճ ժամանակում, երբ վերանայվում էին Բարսեղ I-ի 40 գրքերը, նոր կարգավորումները ավարտվում էին միայն իրենց հատուկ ձևակերպումներով (օրենսդրական աշխատանքի պահանջած հերթականությամբ)[27] և որ այդ բանաձևերը ավելի ուշ ի հայտ գալով մուտքերում, վերամշակման են ենթարկվում ամբողջական նովելներում։ Դրանով հնարավոր է դառնում բացատրել այն պարագան, որ ժողովածուն ընդգրկում է բնագրեր, որոնց կրկնակները (նովելներ 16 և 75, 74 և 109) ամբողջովին կամ մոտավորապես նույն բովանդակությունն ունեն։ Միաժամանակ դրանք կարող էին նախօրոք

---

22 Հմմտ. Fögen. Նույն տեղում (տե՛ս վերևում, ծան. 1)։

23 XII դարի մեկնիչների մոտ գերիշխում է ակներևաբար այն կարծիքը, որ լևոնյան նովելները հրապարակվել են Բասիլիկներից անմիջապես հետո։ Հմմտ. Թեոդորոս Բալսամոնի Տրուլլյանի Զ կանոնի մեկնությունը, որը վկայակոչելով 79-րդ նովելը գրում է. „Ἔστι δὲ ὁ παρὰ τῆς τοιαύτης νεαρᾶς ἀναιρεθεὶς νόμος κεφ. κη' τοῦ α' τίτλου τοῦ γ' βιβλίου τῶν βασιλικῶν, κεφ. ὂν κζ' τῆς ρκγ' ἰουστινιανείου νεαρᾶς" (Rhalles-Potles. Syntagma II, էջ 319, 17—20)։

24 Հմմտ. Շմինկի միանգամայն համոզեցուցիչ փաստարկները. Schminck. „Frömmigkeit" (տե՛ս ծան. 20)։

25 Նույն տեղում, էջ 91, հմմտ. Spuler. Նույն տեղում, էջ 60։

26 90-րդ նովելը. „Ἔδει δὲ πλάσμα τῆς θείας ὄντας ἡμᾶς παλάμης καὶ νῷ καὶ λόγῳ τετιμημένους μὴ προσούσης ἔν τισιν ἀλόγοις ἀρετῆς ἡττᾶσθαι": 91-րդ նովելը. „(...) ὅθεν ἐξὸν καθαρῶν ἀπογεύεσθαι ναμάτων σὺ προκρίνεις τὸν βόρβορον... (Noailles-Dain. Նույն տեղում, էջ 297, 15—16, 301, 8—9)։ Հմմտ. Monnier. Նույն տեղում, էջ 87 և հտ.։

27 Հմմտ. Fögen. Նույն տեղում (ծան. 1), էջ 31։

(գուցե կայսերական նոտարատան պահանջի համապատասխան) կամ հրապարակումից առաջ վերանայվել։ Կայսեր վերադարձը շարադրանքին մտածված բնույթ ունի[28], նույն օրենքի երկու ձևակերպումներն էլ, ամենայն հավանականությամբ, սխալմամբ կամ գուցե կազմողի որոշ նկատառումներով (ամբողջականության ձգտմամբ) ներմուծվել են ժողովածու։ Բացի այդ այս ենթադրությունը կարող է նպաստել Լևոն VI-ի նովելների որոշ առանձնահատկությունների (հետագայում ստեղծված մուտքերի) բացատրմանը. ինչպես, օրինակ, տարբեր ծավալաչափային հարաբերակցության առկայությունը մուտքի և կարգադրական մասի միջև, կամ համապատասխան իրավիճակի ստիպումով միևնույն հարցի առանձին քննարկումը, մասնավորապես երբ ամուսնալուծության հիմքում դրվում է ամուսնու կամ կնոջ հոդեկան հիվանդությունը (նով. 111 և 112-րդ)։

Ինչ վերաբերում է նովելների բովանդակությանը, ապա կարծում եմ, թե ուշադրության արժանի է այն փաստը, որ 113 նովելների ժողովածուի որոշումների մոտավորապես մեկ երրորդը վերաբերում են եկեղեցական թեմաների։ Նման բովանդակություն ունեն դրանցից 35-ը, մասնավորապես՝ 2—17, 54, 55, 58, 65, 68, 73—76, 86—91, 96, 97 և 109-րդ նովելները։ Դրանց բովանդակային քննությունը ցույց է տալիս, որ կայսրը նպատակադրվել է իր հրամանագրերով վերացնել «գործող» կայսերական օրենսդրության և սուրբ կանոնների մեջ հանդիպող հակասությունները։ Աշխարհիկ և եկեղեցական իրավունքի[29] այս համաձայնեցումը նա կատարում է ինչպես հին իրավունքի հակասական կանոնների վերացման ու ձևափոխման միջոցով, այնպես էլ ամբողջովին նոր կարգադրությունների ներմուծումով։ Սակայն այն կանոնները, որոնց կայսրը դիմում է իր օրենսդրական գործունեության ընթացքում, որոշակիորեն հիշատակվում են կամ ակնարկվում։ Հաճախ հիշատակվում են Հինգվեցյան, II Նիկիական և Առաջին-Երկրորդ կամ «Առաքելական» կանոնները, տեղական ժողովների և եկեղեցական հայրերի կանոնախմբերը, որոնք վավերացվել են Հինգվեցյան II կանոնում։ Խոսքը հետևապես վերաբերում է այս կանոնին, և կապ չունի Հուստինիանոսի 131-րդ նովելի հետ, որը հավասարեցնում է քաղաքացիական օրենքների և կանոնների[30] գործադրությունը, քանի որ հուստինիանոսյան այս նովելի կիրառումը տարածվում է միայն առաջին չորս տիեզերական ժողովների կանոնախմբերի վրա։

Մեր այս ենթադրության հիմքում ընկած է այն դրույթը (և հազիվ թե դա բացատրվի պատահականությամբ), որ հիշված կանոնը դրդել է Լևոնին հրապարակել եկեղեցական իրավունքին նվիրված իր բազմաթիվ նովելները։ Չնայած առանձին նովելներ հրապարակված են կայսեր, որևէ պատրիարքի կամ ժողովի նախաձեռնությամբ, իրողությունն այն է, որ կանոնները ի վիճակի չէին ընդգրկել Քաղկեդոնից հետո հրավիրված տիեզերական բոլոր ժողովների, ինչպես նաև Հինգվեցյանի II կանոնի միջոցով վավերացված տեղական ժողովների և եկեղեցու հայրերի կանոնները, որոնք փոխվում կամ անվավեր էին հայտարարվում այս կամ այն կայսերական օրենքով, մանավանդ որ դրանք չունեին նաև օրենքի ձևական ուժ։ Կատարվում էր միակ կարելին, համաձայնեցնելով եկեղեցական կարգադրությունների նշված խմբերից որևէ մեկի հակասական օրենքը, կրկնվում էր համապատասխան կա-

---

28 Ընդհանրապես ընդունված է, որ նովելների բնագիրը ինքը կայսրն է գրել. տե՛ս Monnier. նույն տեղում, էջ 4 և հտ., Spulber. նույն տեղում, էջ 62 և հտ.։

29 Հմմտ. Monnier. նույն տեղում, էջ 23 և հտ., Spulber. նույն տեղում, էջ 78։

30 Հմմտ. Sp. Troianos. „Θεσπίζομεν τοίνυν ταξιν νομων επεχειν τους αγίους εκκλησιαστικους κανόνας..., տե՛ս Βυζαντινα 13 [1985] [«Δώρημα στὸν Ἰ. Καραγιαννόπουλο], էջ 1189—1200։

նոնի բովանդակությունը մի նոր օրենքում։ Նման մոտեցման կարելի է հանդիպել Լեոնի՝ վերևում հիշատակված 35 եկեղեցաիրավական նովելներում։ Միաժամանակ օրենսդիրը ոչ միշտ էր ստիպված կրկին հրապարակել այդպիսի օրենքներ. Լեոնը հրաժարվեց ընդունել Հուստինիանոսյան 131-րդ նովելի համապատասխան որոշումները, հրամայելով Բասիլիկներ (B. 5. 3. 2) մուծել մի միջամտություն, ըստ որի մինչև այդ հրավիրված բոլոր (այդ թվում նաև հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ) տիեզերական ժողովների կանոնները հավասարեցվում էին կայսերական օրենքներին և այսպիսով դրանց ձևականորեն իրավունքի ուժ էր տրվում[31]։ Այս միջամտությունը, ի դեպ, ապացուցում է, որ Լեոնի եկեղեցաիրավական նովելները օրենսդրական աշխատանքի ավարտից առաջ են հրապարակվել։

Երբ մի կողմ ենք դնում եկեղեցաիրավական բնագրերը, անհնար է դառնում գտնել իր կարգավորման նյութով որոշակի ծրագրի[32] հետևող և ընթացիկ օրենսդրական աշխատանքով պայմանավորված նովելների մի խումբ[33]։ Մնացած մոտ 80 նովելներում կարգավորվում են իրավունքի գրեթե բոլոր մարզերին վերաբերող հարցեր, որոնք, անշուշտ, բավական անհամաչափ են բաշխված։ Մեծ մասամբ դրանք քրեական իրավունքին վերաբերող հարցեր են՝ անհատական, ընտանեկան, ժառանգական և ընչական իրավունքի բնագավառից։ Շոշափվում են նաև հասարակական իրավունքի խնդիրներ, խոսքը հատկապես վերաբերում է դատական պրոցեսին և քրեական իրավունքին[34]։

Պրոխեյրոն Նոմոսի նախաբանի վերջում, ուր ամփոփ ներկայացված է կատարված օրենսդրական աշխատանքը, այսպես է խոսվում այդ ... օ ի (մատյան) պահպանած որոշումների մասին. «Քանի որ մենք վերևում հիշեցինք հին օրենքների զտման մասին, պետք է հայտնենք, որ մենք մեկ հատորի մեջ դասավորեցինք և կողք կողքի դրեցինք բոլոր պահպանված (իրավաբանական որոշումները), որպեսզի ամենից առաջ պարզ և հասկանալի գառնա դրանց անվավերականությունը»[35]։ Քանի որ մեզ չի հասել այս հատորից որևէ հետք, այդ իսկ պատճառով գրեթե երկու դար սրա հետ են նույնացնում լևոնյան 113 նովելների ժողովածուն, «որի գլխավոր նպատակն էր ոչնչացումից փրկել կարգադրությունները, հատկապես հուստինիանոսյան որոշումները»[36]։

Ես փոքր-ինչ թերահավատ եմ այս տեսության նկատմամբ[37]։ Իմ զգուշությունը հենվում է հետևյալ հիմքի վրա. ա) Լևոնի ոչ բոլոր նովելներն ունեն հակաչեղյալության ուժ։ Դրանց մի մասը նպատակ է հետապնդում լրացնել բացը. հմմտ. օրինակ 17-րդ նովելը նորածին երեխայի մկրտության ժամանակի վերաբերյալ։ բ) Ըստ Պրոխեյրոնի նախաբանի բնագրի, այս հատո-

---

[31] Տե՛ս հատկապ. Sp. Troianos. Die kirchenrechtlichen Novellen Leons VI. und ihre Quellen, տե՛ս Subseciva Groningana 4 (1990 (=Novella Constitutio. Studies in Honour of Nicolaas van der Wal). էջ 233—247։

[32] Fögen. Նույն տեղում (տե՛ս վերևում, ծան. 1), էջ 30։

[33] Միայն առանձին դեպքերում է հնարավոր առանձնացնել նովելների փոքր խմբեր։ Օրինակի համար համեմատի՛ր 24—27-րդ նովելները ծնողների և երեխաների հարաբերության մասին։ Տե՛ս հատկապես Marie Theres Fögen. Leon liest Theophilos. Eine Exegese der Novellen 24—27 des Kaisers Leon VI, տե՛ս Subseciva Groningana 4 (1990, հմմտ. վերևում, ծան. 31), էջ 83—97։

[34] Համակողմանի քննությունը տե՛ս Monnier. Նույն տեղում, էջ 40—190։

[35] "Ἐπειδὴ δὲ ἀνακαθάρσεως τῶν παλαιῶν νόμων ἐμνημονεύσαμεν, εἰδέναι χρή, ὅτι συναγηοχότες ἐν ἑνὶ τεύχει τὰ ἀνθηρημένα πάντα τεθείκαμεν, ὡς ἂν δήλη καὶ σαφὴς ἡ τούτων ἀργία πᾶσι γνωρίζοιτο" (...). (Schminck. Studien [վերևում, ծան. 21], էջ 61, 77—79)։

[36] Schminck. Studien, էջ 66 (ողջ գրականության հղումներով), հմմտ. Նույնի՝ „Frömigkeit" (վերևում՝ ծան. 20), էջ 94։

[37] Հմմտ. նաև Spulber. Նույն տեղում, էջ 71։

բում հավաքվել են առանց բացառության բոլոր պահպանված որոշումները։ Նովելների ժողովածուն ամենևին էլ չի պարունակում այնպիսի նոր կարգադրություններ, որոնց միջոցով Լևոնը անվավեր դարձներ նախկին օրենսդրությունը։ գ) Մեծ տիպարը և միաժամանակ Լևոնի մեծ ախոյանը մնում է Հուսաինիանոսը, որին նա ցանկանում էր գերազանցել օրենսդրության ծավալով և օրենսդրական ընդարի գրական մշակումով։ Այդ իսկ պատճառով քիչ հավանական է, որ Լևոնն անձամբ մասնակցել է «իր» նովելների խմբագրմանը, սահմանափակվելով մի պարզ ցանկով։

Լևոն Իմաստունի նովելները մեզ են ավանդված ոչ միայն մինչև այժմ քննարկված 113 նովելների ժողովածուով։ Սրա կողքին կա մի երկրորդ ժողովածու ևս, որն ամենակարճ ձևակերպումներով պարունակում է նովելների ընդարը։ Այստեղ բերվում են հետևյալ 56 նովելների կարգադրություններից հատվածներ. 1, 5—7, 9, 10, 13, 14, 18—23, 25—27, 32—36, 39—43, 50, 56, 57, 66—72, 77, 82, 84, 85, 92, 95, 97—104, 106—109[38]։ Այս ժողովածուն պահպանվել է մոտ 30 ձեռագրերով Մեծ Բասիլիկների հավաքածուի երկու հավելվածներում (Λ III 19 և B III 1)[39] և կրում է „Ἐπίτομη τῶν νεαρῶν Λέοντος τοῦ εὐσεβοῦς βασιλέως“ վերնագիրը։ Լևոնի նովելների էկլոգան (համառոտում), որը հավանաբար ստեղծվել է X դարի առաջին կեսին[40], հրապարակվել է Նոալլիսի և Դենի կողմից, սակայն չի առանձնացվել 113 նովելների ժողովածուից, թեպետ հստակորեն տարբերակվում է այս հրատարակության քննական ապարատի ցցուն տարբերությունների շնորհիվ։

Էկլոգայում կիրառված ընտրության չափանիշների վերաբերյալ Լ. Վենգերը դրում է, որ «IX դ. կեսից մինչև X դարի կեսը առանց պրակտիկայի [ստիպված են եղել—Ս. Տ.] ներմուծել կայսերական սովորութաիրավական օրենքների մի զգալի քանակություն»[41]. այսպիսով նա հրապարակայնորեն կարծում էր, որ այդ երկը պարունակում է միայն այն նովելները, որոնք շատ ավելի մեծ «համարում էին ստացել» ժամանակի մեջ։ Այս եզրակացությունը ևս համարում եմ բավական կամայական, քանի որ ժողովածուից պակասում են բազմաթիվ նովելներ, որից դժվար է ենթադրել, որ դրանք բոլորն էլ, և այն էլ մի այդպիսի կարճ ժամանակամիջոցում, կարող էին ուժը կորցրած համարվել։ Դրա համար այդպիսի ցուցադրական օրինակ կարող է ծառայել 89-րդ նովելը, որի մեջ ձևական օրհնանքը վերածվել է օրինական ամուսնության նախապայմանի։ Բյուզանդական ամուսնական իրավունքի համար չափազանց կարևոր այս նովելը ներկայացված չէ էկլոգայում, ինչն անկասկած ամենևին էլ չի նշանակում, թե այն դուրս էր մնացել «սովորութաիրավական պրակտիկայից»[42]։ Հակառակ դրան ես հավատում եմ, որ էկլոգայի որոշ չափով տարօրինակ կազմման բացատրությունը մի այլ տեղում պետք է փնտրել, այն է՝ կազմողի անձնական հետաքրքրությամբ պայմա-

---

38 Երկու ժողովածուները բովանդակող նովելների համաբարբառը տե՛ս Spulber. Նույն տեղում, էջ 84 և հտ., J. A. B. Mortreuil. Histoire du droit byzantin, Bd. II, Paris, 1844 (Նոր հրատ. Osnabrück, 1966), էջ 307—310։

39 Հմմտ. N. Svoronos. La Synopsis Major des Basiliques et ses appendices. [Bibliotheque byzantine, Etudes, 4], Paris, 1964, էջ 42 և հտ. և էջ 99։

40 Հմմտ. Noailles-Dain. Նույն տեղում, էջ XLVI:

41 Wenger. Նույն տեղում (վերևում, ծան. 1), էջ 707։ Հմմտ. նաև Mortreuil. Նույն տեղում, էջ 313։ „(...) l'auteure de cette collection... a éliminé les constitutions qui paraissaient avoir le moins d'importance et qui avaient sans doute déja perdu leur autorité“ (...այս ժողովածուի հեղինակը... դուրս է նետել ավելի պակաս կարևոր թվացող որոշումները և անկասկած կորցրել է իր հեղինակությունը)։

42 Բացի այդ դրանք ընդգրկվել են Թեոդորոս Բալսամոնի մեկնություններում։ Վերևում քննարկված լևոնյան նովելների երրորդ մասը (նվիրված եկեղեցական առօրյա ծեսին) ընդգրկված է նաև էկլոգայում։

նավորված որոշակի հարցախմբում[43]։ Այս ենթադրությունը թույլ է տալիս մտածել, որ էկլոգայում շատ վատ են ներկայացված իրավունքի որոշ ճյուղեր։ Աչք է զարնում այն պարագան, որ ժողովածուի եկեղեցաիրավական նովելները[44] մեծ մասամբ առանց ներածության են։ Բաց են թողնված նաև պատժական բովանդակությամբ բազմաթիվ նովելներ[45]։

Հենց նոր քննարկված Լևոնի նովելների էկլոգայից բացի, Փարիզի հունարեն 1385 A ձեռագիրը մեկն է, ուր պահպանվել է Նոայլիսի և Դենի հայտնաբերած՝ այսպես կոչված «Փոքր էկլոգան», որն ամբողջությամբ պարունակում է 10, 22 և 45-րդ նովելների բնագիրը[46]։ Բացի դրանից 110-րդ նովելը առանձին ավանդությամբ ներկայացված է Մեծ Բասիլիկների ժողովածուի Բ հավելվածում (B III 3)[47], որոշակի ինքնատիպություն է ձեռք բերել նաև 17-րդ նովելի համառոտ շարադրանքը[48]։ Վերջապես առանձնացված ենք դանում 5, 6, 12, 51 և 56-րդ նովելների ամբողջական կամ համառոտված բնագրերը[49]։

Լևոն VI-ի նովելները հետագայում բազմիցս հղվում են բյուզանդական իրավական գրականության մեջ։ Սկզբում ուղղակիորեն, այնուհետև նաև անուղղակիորեն դրանք վավերացվել են Ալեքս I[50] և Մանուել I[51] Կոմնենոսների կայսերական օրենքներում։ Բացի դրանից գրեթե բոլոր իրավական ժողովածուները (սկսած X դարից մինչև Բյուզանդական կայսրության կործանումը) իրենց հերթին օգտագործել են դրանք։ Epitome legum-ում, Eisagoge (Epanagoge) aucta-ում, Peira-ում, Միքայել Ատալիատեսի Ponema-ում, Միքայել Պսելլի Synopsis-ում, Tipoukeitos-ում, Բարսեղյան Էկլոգայում, Synopsis minor-ում, Procheiron auctum-ում, Մաթեոս Բլաստարեսի Syntagma-ում, Կոստանդին Արմենոպուլոսի Hexabiblos-ում զանազան մեծության հատվածներ ենք գտնում լևոնյան նովելներից, որոնք դրանց բովանդակության համառոտումներ կամ մեջբերումներ են[52]։

Նովելներն օգտագործում էին նաև մեկնողական երկերի հեղինակները։ Դրանք հաճախ նկատի են առնվում (այսպես կոչված՝ նոր) Բասիլիկների

---

43 Հմմտ. Spulber. Նույն տեղում, էջ 87 և հտ.։

44 Եկեղեցուն վերաբերող ընդամենը 35 նովելներից միայն տասն էին, այն է՝ 3—7, 9, 10, 13, 14, 68, 97, և 109-րդ նովելները, ընդգրկված ժողովածուի մեջ։

45 Հմմտ. 52, 60—64-րդ նովելները։

46 Noailles-Dain. Նույն տեղում, էջ XLVII և հտ.։

47 Svoronos. Նույն տեղում (տե՛ս ծան. 39), էջ 99, Noailles-Dain. Նույն տեղում, էջ XLVIII և հտ.։

48 El. Papagianne—Sp. Troianos. Ἡ νεαρὰ 17 Λέοντος τοῦ Σοφοῦλοι μία ἐπιτομή της, In Βυζαντιναὶ Μελέται 1 (1988), էջ 32—51։

49 Հմմտ. Noailles-Dain. Նույն տեղում, էջ XLIX և հտ., 51-րդ նովելի համար համեմատի՛ր Svoronos. Նույն տեղում, էջ 134։ Այդ պատահել է նաև Սկորբյալենոյան R-1—15 մատյանում՝ Մեծ Բասիլիկների ժողովածուի հավելվածների ձեռագրում, այնուհանդերձ պահպանված բնագրային խմբերի ավանդությունից դուրս։

50 Հմմտ. 1084 և 1092 թթ. նշանագրության մասին նովելները (Dölger. Նույն տեղում, № 1116 և 1167, Zepos. Jus I, էջ 306, 321 և հտ.), որոնց մեջ հղված են լևոնյան՝ 74-ի և 109-րդ նովելները։

51 Հմմտ. 1116 թ. դատաիրավական տարբեր հարցերին վերաբերող նովելը (Dölger. Նույն տեղում, № 1465, (Zepos. Jus I, էջ 391), ուր հիշատակված է 108-րդ նովելը։

52 Տե՛ս շատ մանրամասն նկարագրությունը Spulber. Նշվ. աշխ., էջ 88—96, հմմտ. նաև (Բարսեղյան էկլոգայի համար) L. Burgmann. Ecloga Basilicorum [Forschungen zur byzant. Rechtsgeschichte, 15]. Frankfurt a. M., 1988 և (Բլաստարեսի համար) Sp. Troianos. Περὶ τὰς νομικὰς πηγὰς τοῦ Ματθαίου Βλαστάρη, տե՛ս Ἐπετηρὶς Ἑταιρ. Βυζαντινῶν Σπουδῶν 41 [1979—1980]. էջ 305—329 (հատկապե՛ս էջ 327)։

սխոլիաներում[53], Թեոդորոս Բալսամոնի մեկնություններում և Ալեքսիոս Արիստոնեսի Նոմոկանոնի 14 տիտղոսներում, հատկապես 34 նովելների որոշման (երբեմն բառացի, իսկ հիմնականում համառոտ) հատվածներ են ցիտված կանոններում[54], նույնը կարելի է հավաստել նաև ուշ բյուզանդական եկեղեցական իրավունքի որոշումներով[55]։

Ինչ վերաբերում է Լևոնի նովելների հետագա ճակատագրին, ապա պետք է ընդգծել նրա ազդեցությունը Բյուզանդական կայսրության սահմաններից դուրս։ Բլաստարեսի հավաքածուի (սինտագմա) կազմում այն շրջանառության մեջ է դրվում ոչ միայն Հարավային Եվրոպայի հարևան երկրներում և Ռուսաստանում, այլ նաև Արևմուտքում, ուր այն, ինչպես սպասելի էր, հա-

---

53 Բասիլիկների մեկնություններում ցիտված կամ առնվազն հիշված են հետևյալ նովելները։

Նովել 18. Մեկն. 5 և 10 B.28.2.1-ից (BS 1804, 17—22, 1805, 3)

Նովել 19. Մեկն. 2—3 B.11.1.76-ից (BS 329, 18—25, 330, 3—4), մեկն. 3 B. 11.1.88-ից (BS 335, 28—31)

Նովել 20. Մեկն. 1 B.29.2.1-ից (BS 2117, 4—6)

Նովել 32. Մեկն. 6 B.11.2.35-ից (BS 410, 4—5 և 7)

Նովել 34. Մեկն. 1 B.60.57.1-ից (BS 3928, 4—6)

Նովել 35. Մեկն. 3 B.60.58.1-ից (BS 3929, 21—22)

Նովել 48. Մեկն. 3 B.21.1.17-ից (BS 1242, 24—27)

Նովել 49. Մեկն. 5 B.21.1.51-ից (BS 1275, 14—15)

Նովել 53. Մեկն. 5 B.11.1.60-ից (BS 307, 6—7), B. 60.23.3-ից (BS 3588, 22—28)

Նովել 59. Մեկն. 20 B. 28.4.21-ից (BS 1827, 12—17)

Նովել 60. Մեկն. 1 B. 60.51.64-ից (BS 3904, 21—32)

Նովել 61. Մեկն. 4 B. 21.3.2-ից (BS 1314, 16—19), նովել 1 B. 60.24.1-ից (BS 3595, 4—8)

Նովել 64. Մեկն. 1 B. 60.20 rubr.-ից (BS 3541, 4)

Նովել 66. Մեկն. 2 B. 60.48.4-ից (BS 3840, 13—16)

Նովել 67. Մեկն. 1 B. 60.51.35-ից (BS 3895, 2—7)

Նովել 70. Մեկն. 8 և 44 B. 60.3.11-ից (BS 3102, 15—19, 3105, 22—23)

Նովել 72. Մեկն. 7 և 57 B. 11.1.7-ից (BS 193, 17—21, 209, 22—24)

Նովել 77. Մեկն. 7 B. 11.2.35-ից (BS 411, 1—2), մեկն. 11 B. 60.41.55-ից (BS 3797, 30—33)

Նովել 96. մեկն. 15 B. 60.23.3-ից (BS 3588, 22—23), մեկն. 5 B. 60.24.1-ից (BS 3595, 27)

Նովել 99. մեկն. 15 B. 22.5.34-ից (BS 1460, 11—13)

Նովել 105. մեկն. 3 B. 60.45.17-ից (BS 3830, 13—17)

Հմմտ. նաև համապատասխան մեկնությունների համեմատումը Mortreuil նշվ. աշխ., էջ 331 և հտ.։

54 Հմմտ. El. Papagianne—Sp. Trolanos. Διατάξεις τῆς πολιτειακῆς νομοθεσίας εἰς τὸ ἑρμηνευτικὸν ἔργον τῶν Ἀριστηνοῦ, Ζωναρᾶ καὶ Βαλσαμῶνος, տե՛ս Ἐπετηρὶς Ἑταιρ. Βυζαντινῶν Σπουδῶν 45 (1981—1982), էջ 201—238 (հատկապես էջ 233 և հտ.)։

55 Հմմտ. երկու որոշումները Դեմետրիոս Խոմատիանոսի Zepos. Jus VII, էջ 508 և հտ. =J. B. Pitra. Analecta sacra et classica spicilegio solesmensi parata. VI. Juris ecclesiastici Graecorum selecta paralipomena, Paris—Rom 1891 (նոր հրատ. Farnborough 1967), Sp. 82, 514:

նախ օգտագործվում է իրավաբանական երկերում[56]։ Լևոն Զ-ի նովելները բյուզանդական իրավունքի մյուս սկզբնաղբյուրների հետ միասին 1835 թ. փետրվարի 23-ին[57] դրվում են Հունաստանի գործող քաղաքացիական իրավունքի հիմքում, քանի դեռ դրանք չէին փոխարինվել նոր օրենքներով։ Այս դրությունը շարունակվել է մինչև 1946 թ. փետրվարի 23-ը, երբ ընդունվեց Հունաստանի քաղաքացիական օրենսգիրքը։ Սակայն նշված թվականից հետո էլ իրավունքի այս մարզում կարևոր են բյուզանդական իրավունքի սկզբնաղբյուրները (ներառյալ նովելները), այդ է վկայում հունական վճռաբեկ դատարանի որոշումը[58]։

Բացի 113 նովելների ժողովածուից, որի մասին խոսք գնաց վերևում, մեզ է հասել ևս չորս նովել, որոնք վերագրվում են նույն կայսրին[59]։ Այդ բնագրերից մի քանիսի վավերականությունը մի շարք պատճառներով (արտաքին-ձևական կամ բովանդակության տեսանկյունից) դեռևս վիճարկելի է։ Այդ նովելներից երկուսի («Հողամասի օտարման մասին» և «Նոտարներ մասին») անվավերականությունը, վերջերս լույս տեսած հրապարակման մեջ, կարողացել է պարզել Ա. Շմինկը, հրատարակելով դրանց բնագրերը։ Մյուս երկուսը ևս, որոնք վերաբերում են օրենքներին հակադրվող դատավորներին և վարձակալությանը, հավանաբար չեն կապվում մեր խնդրի հետ։

Գերմաներենից թարգմանեց

Ա. ԲՈՂՈՅԱՆԸ

НОВЕЛЛЫ ЛЬВА VI

Проф. СПИРОС Н. ТРОЯНОС (Афины)

Резюме

Деятельность византийского императора Льва VI Мудрого (886—912) на поприще юриспруденции занимает второе место после Юстиниана (527—565). Во время правления этого императора Македонской династии были заново отредактированы, рассмотрены и изданы «Василики» в 60 книгах, где законодатель-император привел соответствия между решениями Corpus iuris-a и своими новеллами. В основе настоящей статьи—юридико-источниковедческое изучение сборника 113 новелл. Принимая во внимание новую датировку (888/889 г.) Андреаса Шминка новой редакции

---

56 Հմմտ. Spulber. Նշվ. աշխ., էջ 96—121։

57 Հմմտ. Sp. Troianos. Von der Hexabiblos zu den Basiliken. Subseciva Groningana 3 (1989), հմմտ. վերևում ծան. 1), էջ 137—141։

58 Տե՛ս հմր. 1300/1984 (1. Սենատ) որոշումը տե՛ս Ἑλληνικὴ Δικαιοσύνη 26 (1986), էջ 41—43։ Դատարանը օգտագործել է Հուստինիանոսի 5, 76 և 123. 38-րդ, ինչպես նաև 5 և 6-րդ լևոնյան նովելները վանականի իրավական ձեռքբերումների մասին։ Հմմտ. նաև դրան վերաբերող կարծիքները Sp. Troianos. տե՛ս Νομικὸν Βῆμα 28 [1980], էջ 453—456։

59 Տե՛ս դրանց հրատարակությունը Noailles-Dain. նույն տեղում, էջ 376—378։ Դրանցից առաջին երկուսին էլ տե՛ս A. Schminck. „Novellae extravagantes" Leons VI, տե՛ս Subseciva Groniagana 4 (1990, հմմտ. վերևում, ծան. 31), էջ 195—209 (մասնավորապես, էջ 198, 204 և հտ.)։

60 Schminck. նույն տեղում (հմմտ. նախորդ ծանոթագրությունը)։ Ճշմարիտ է, երկու բնագրերն էլ վերաբերում են էպարքոսի գրքից կատարված քաղվածքին։

«Василик», автор статьи датирует появление сборника 113 новелл Льва VI 886—888 годами. Обращаясь к сохранности текста, на котором видны следы работы писцов последующих эпох, автор уточняет, что сборник этих новелл дошел до нас в пяти рукописях. Автор статьи также отмечает, что в издании Noailles-Dain (1944) этот сборник не отделен от Эклоги новелл Льва VI, несмотря на то обстоятельство, что в разночтениях издания эти труды четко различаются. В сборнике 113 новелл император устраняет противоречия между императорским законодательством и святыми канонами церкви: около трети этих новелл (35) касается церковного права. Остальная часть сборника касается различных вопросов гражданского и публичного права. Новеллы Льва VI в дальнейшем неоднократно упомянуты в византийской правовой литературе последующих веков, а с 1835 г. легли в основу гражданского права Греции.